

3.5.5. 2001թ.-ից ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՒՄԲ

Հետազոտության գլխավոր համակցության նկատմամբ գնահատված արդյունքներով, հետազոտությամբ առանձնացված 2001թ.-ից միասնական գրանցամատյանում գրանցված կազմակերպությունների խմբի 2001թ. դրամական միջոցների մուտքերը կազմել են 141.5 մլն. դրամ, ելքերն ըստ հաշվեգրման՝ 95.9 մլն. դրամ, իսկ ըստ փաստացի իրականացման՝ 88.8 մլն. դրամ:

Նշված խմբի կազմակերպությունների դրամական միջոցների մուտքերում անդամավճարները, նվիրատվությունները և այլ անհատույց մուտքերը կազմում են 73.3% կամ 103.7 մլն. դրամ, ապրանքների, արտադրանքի, աշխատանքների և ծառայությունների վաճառքից ստացված մուտքերը համապատասխանաբար՝ 25.0% և 35.3 մլն դրամ: Հետաքրքիր է նաև, որ, ըստ հետազոտությամբ ստացված արդյունքների, կրթության բնագավառի ծառայությունների մատուցումից ստացված մուտքերը կազմել են 27.9 մլն. դրամ կամ այդ խմբի կազմակերպությունների ընդամենը մուտքերի 19.7%-ը, իսկ կազմակերպություններից ստացված անդամավճարները, նվիրատվությունները և այլ անհատույց մուտքերը կազմել են 85.8 մլն. դրամ կամ ընդամենը մուտքերի 60.6%-ը:

2001թ.-ից միասնական գրանցամատյանում գրանցված կազմակերպությունների խմբի 2001թ. դրամական միջոցների ելքերում հիմնական մասը կազմում են ընթացիկ ծախսերը, որոնք, ըստ հաշվեգրման, կազմում են 93.0 մլն. դրամ կամ ընդամենը հաշվեգրված ելքերի 97.0%-ը (փաստացի ընթացիկ ծախսերը կազմում են 86.0 մլն դրամ կամ ընդամենը փաստացի ելքերի 96.8%-ը): Ուշագրավ է, որ հաշվեգրված ընթացիկ ծախսերում նյութական ծախսերը կազմում են 22.6%, աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումները՝ 16.8%, իսկ 49.1%-ը կազմում են այլ ընթացիկ ծախսերը:

Հետազոտության գլխավոր համակցության նկատմամբ գնահատված արդյունքներով, հետազոտությամբ առանձնացված 2001թ.-ից միասնական գրանցամատյանում գրանցված ոչ առևտրային կազմակերպությունների խմբի 2001թ. դրամական միջոցների մուտքերը, դրանց փաստացի և հաշվեգրված ելքերն, ըստ առանձին ուղղությունների, բերված են աղյուսակներ 13 և 14-ում:

2001թ.-ից միասնական գրանցամատյանում գրանցված ոչ առևտրային կազմակերպությունների խմբի 2001թ. դրամական մուտքերն, ըստ առանձին ուղղությունների՝ զնահատված հետազոտության արդյունքներով

<i>Ցուցանիշի անվանումը</i>	<i>հազ. դրամ</i>	<i>տոկոսով տվյալ խմբի ընդամենի նկատմամբ</i>
Անդամավճարներ, հովանավորչական մվիրատվություններ, հունանիտար օգնություն և այլ անհատույց մուտքեր	103 706	73.28%
Այդ թվում՝ բնակչությունից	0	0.00%
արտասահմանից	17 948	12.68%
կազմակերպություններից	85 759	60.60%
Մուտքեր պետական բյուջեից և արտաբյուջետային հիմնադրամներից	1 303	0.92%
Մուտքեր ապրանքների, արտադրանքի, աշխատանքների և ծառայությունների վաճառքից	35 304	24.95%
Որից՝ բնակչությանը մատուցված վճարովի ծառայություններից	27 932	19.74%
Այդ թվում՝ Կրթության ծառայություններ	27 932	19.74%
Հիմնական միջոցների վարձակալության դիմաց ստացած եկամուտներ (առանց ԱԱՀ)	0	0.00%
Հիմնական միջոցների վաճառքից և վերագնահատումից ստացված եկամուտներ	0	0.00%
Շահաբաժիններ, տոկոսներ և ֆինանսական գործունեությունից եկամուտներ	450	0.32%
Այլ գործառնական և ոչ գործառնական եկամուտներ	0	0.00%
Վարկեր, փոխառություններ	0	0.00%
Այլ մուտքեր	761	0.54%
Ընդամենը մուտքեր	141 524	100.00%

2001թ.-ից միասնական գրանցամատյանում գրանցված ոչ առևտրային կազմակերպությունների խմբի 2001թ. դրամական ելքերն (փաստացի և հաշվեգրված), ըստ առանձին ուղղությունների՝ զնահատված հետազոտության արդյունքներով

<i>Ցուցանիշի անվանումը</i>	փաստացի		հաշվեգրված	
	<i>հազ. դրամ</i>	<i>տոկոսով տվյալ խմբի ընդամենի նկատմամբ</i>	<i>հազ. դրամ</i>	<i>տոկոսով տվյալ խմբի ընդամենի նկատմամբ</i>
Ընթացիկ ծախսեր, ընդամենը	85 958	96.79%	93 014	97.03%
Այդ թվում՝ Նյութական ծախսեր	21 012	23.66%	21 012	21.92%
Աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումներ	15 627	17.60%	15 627	16.30%
Սոցիալական ապահովագրության և ապահովության վճարներ	3 654	4.11%	3 654	3.81%
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումներ	-	-	7 056	7.36%
Վարձակալության դիմաց կատարված վճարումներ	0	0.00%	0	0.00%

<i>Ցուցանիշի անվանումը</i>	փաստացի		հաշվեգրված	
	<i>հազ. դրամ</i>	<i>տոկոսով տվյալ խմբի ընդամենի նկատմամբ</i>	<i>հազ. դրամ</i>	<i>տոկոսով տվյալ խմբի ընդամենի նկատմամբ</i>
Վճարումներ այլ կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց	0	0.00%	0	0.00%
Այլ ընթացիկ ծախսեր	45 665	51.42%	45 665	47.64%
Ներդրումներ, ուղղված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռք բերմանը	1 541	1.74%	1 541	1.61%
Կապիտալ նորոգմանն ուղղված ծախսեր	0	0.00%	0	0.00%
Նպաստներ և նյութական օգնություն բնեղեն արտահայտությամբ	0	0.00%	0	0.00%
Նպաստներ և նյութական օգնություն դրամական արտահայտությամբ	1 303	1.47%	1 303	1.36%
Կորուստներ և դուրս գրումներ	0	0.00%	0	0.00%
Պարտքի հիմնական գումարի և վարկերի ու փոխառությունների տոկոսների մարում	0	0.00%	0	0.00%
Բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերում, մուծումներ կանոնադրական կապիտալում և փայտիրական մուծումներ	0	0.00%	0	0.00%
Այլ գործառնական և ոչ գործառնական ծախսեր	0	0.00%	0	0.00%
<i>Ընդամենը ելքեր</i>	<i>88 802</i>	<i>100.00%</i>	<i>95 858</i>	<i>100.00%</i>